10369

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան

«19» 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 192 - 24

Նախաձեռնող՝ *«ԺԱՍՄԻՆԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ*
ք. Երևան, Արշակունյաց պ., շ. 50, բն. 16

Գործունեությունը՝ *Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոցի 70 հասցեում նոր տեղադրվող ոչ հիմնական փայտյա տաղավարների և տնակների տեղակայման աշխատանքներ*
Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ բնակավայր

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 192 - 24

«19» սեպտեմբեր 2024 թ.

Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոցի 70 հասցեում նոր տեղադրվող ոչ հիմնական փայտյա տաղավարների և տնակների տեղակապման աշխատանքների իրականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԺԱՍՄԻՆԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /«Բ» կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք, Դրախտիկ բնակավայր

Ներածական մաս. «Ժասմինա գրուպ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության է ներկայացվել Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոցի 70 հասցեում նոր տեղադրվող ոչ հիմնական փայտյա տաղավարների և տնակների տեղակապման աշխատանքների նախնական գնահատման հայտը (այսուհետ՝ Հայտ): Նախագիծը մշակվել է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 31-ի N 35-Ճ նախագծման թույլտվության հիման վրա: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ազգային պարկի տարածքում Դրախտիկ գյուղի ափամերձ հատվածում և հանդիսանում է հանգստյան գոտի:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Գործունեության համար նախատեսված հողամասի մակերեսը 1,1 հա է: Հողամասի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը՝ հանգստի համար նախատեսված, գրանցված իրավունքի տեսակը՝ հողամասի կառուցապատման իրավունք:

Նկարագրական մաս. Նոր տեղադրվող ոչ հիմնական փայտյա տաղավարների և տնակների տեղակապման աշխատանքները նախատեսվում է իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոցի 70

հասցեում, հատուկ պահպանվող տարածքի՝ հանգստի համար նախատեսված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտում: Նախատեսվում է տեղադրել 12 հատ միահարկ մանսարդային 7,5 մ x 6,0 մ չափերով փայտե հավաքովի տնակ, 25 հատ միահարկ 3,5 մ x 3,5 մ չափերով տաղավար-զրուցարան, 1 հատ հավաքովի 9,0 մ x 6,6 մ չափերով սանհանգույց և մաքրման կայան: Փայտե հավաքովի տնակների և տաղավարների դետալները բերվելու են պատրաստի վիճակում, որոնք ձեռքով հավաքվելու են տեղում: Համաձայն Հայտում ներկայացված տեղեկատվության՝ աշխատանքների կատարման համար շինտեխնիկա և շինանյութեր չեն պահանջվելու՝ տնակները բերվելու են պատրաստի վիճակում և հավաքվելու են ձեռքով: Հողային աշխատանքներ նախատեսվել են միայն մաքրման կայանի հորի փորման ընթացքում՝ քիչ քանակությամբ: Նախատեսվել է բնառեսուրսներից օգտագործել ջուր՝ շինանձնակազմի խմելու-կենցաղային նպատակների և ջրցանի համար: Աշխատանքների իրականացման ընթացքում և շահագործման փուլում խմելու և կենցաղային կարիքների, ինչպես նաև ջրցանի համար անհրաժեշտ ջրային ռեսուրսները նախատեսվում է վերցնել խորքային հորից՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո:

Փորձաքննական հիմնավորումներ. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) համաձայն: Փորձաքննության ընթացքում Օրենքով սահմանված կարգով ազդակիր բնակավայրում (Դրախտիկ) անցկացվել է հանրային քննարկում, որի ընթացքում ներկաները հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը, իսկ Դրախտիկ բնակավայրի բնակիչները ներկա չեն գտնվել հանրային քննարկմանը:

Փորձաքննական գործընթացում Հայտի վերաբերյալ Օրենքով սահմանված կարգով պետական մարմիններից և ՇՄՆ ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ:

ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը Հայտի վերաբերյալ տվել է բացասական դիրքորոշում՝ ներկայացնելով մի շարք դիտողություններ: Հանձնաժողովի կողմից ներկայացվել են դիտարկումներ կենսաբանական մաքրման կայանի, շահագործման փուլում ակտիվ տիղմի կիրառման, կեղտաջրերի կուտակման համար կառուցվող սեպտիկ հորի տեղակայման վայրի, ոչ հիմնական շինությունների ծովի մակարդակից տեղակայման վայրերի բացարձակ նիշերի վերաբերյալ:

ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի, ինչպես նաև ՇՄՆ-ի կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկություններն ուղարկվել են «Ժասմինա գրուպ» ՍՊԸ-ին:

Ընկերության կողմից Հայտը լրամշակվել է թերի, ներկայացված առաջարկությունների ու դիտողությունների մի մասը չի ընդունվել, մասնավորապես՝

1. Լրամշակված հայտում մաքրման կայանի վերաբերյալ ներկայացվել են ընդհանուր տեղեկություններ, չի ներկայացվել մաքրման կայանի տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների, սեպտիկ հորին միացման պայմանների (արտաքին և ներքին ցանց, միացումներ), մաքրման կայանի և սեպտիկ հորի տեղադրման կիրառ

վերաբերյալ հստակ տեղեկատվություն, չի նկարագրվել, թե կոնկրետ որ նիշում է լինելու մաքրման կայանը, ինչպես է միանալու սեպտիկ հորին, նկարագրված չեն ակտիվ տիղմի մաքրման միջոցառումները, արտաքին և ներքին միացման ցանցերը, մաքրման եղանակները և այլն: Հայտում և թղթային տարբերակով ներկայացված նախագծում կան անհամապատասխանություններ (էլեկտրոնային տարբերակով ներկայացված քարտեզ-սխեմաներն ընթեռնելի չեն): Ներկայացված չէ նաև մաքրման կայանի հզորությունը հանգստացողների թվին համապատասխան: Հայտում նկարագրված է սանհանգույցի տեղադրում, սակայն ներկայացված չեն դրա՝ մաքրման կայանին միանալու լուծումները:

2. Չեն ներկայացվել լրացուցիչ հիմնավորումներ (կենսաբազմազանության վերաբերյալ կատարված ուսումնասիրություններ, մասնագիտական հիմնավորումներ, գրականության տվյալներ և այլն), նախատեսվող գործունեության տարածքում իրականացված ուսումնասիրությունների վերաբերյալ (Հայտում նշված) ըստ որի՝ հազվագյուտ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ նախատեսվող գործունեության տարածքում չեն հանդիպել:

3. Չի ներկայացվել մշտադիտարկումների իրականացման համար նախատեսվող ծախսերի համար հատկացված գումարի չափի իրատեսական լինելու վերաբերյալ հիմնավորում:

4. Հայտում և բնապահպանական կառավարման պլանում առկա են բազմաթիվ անհամապատասխանություններ՝ կապված նախատեսվող գործունեության շինհրապարակի կազմակերպման, շինտեխնիկայի և շինանյութերի կիրառման հետ՝ հաշվի առնելով, որ Հայտում նշվել է, որ աշխատանքների իրականացման ընթացքում շինտեխնիկա և շինանյութեր չեն օգտագործվելու և փայտյա տնակները բերվելու են պատրաստի վիճակում:

5. Հստակ չեն նշվել ոչ հիմնական շինությունների տեղակայման վայրերը, Հայտում նշված է, որ ժամանակավոր շինությունները տեղակայվելու են Սևանա լճի 1901,5 նիշից վերև՝ ինչի հետևանքով չի կատարվել ՀՀ կառավարության 2008 թվականի 1563-Ն որոշման պահանջները, որտեղ սահմանվում է ջրածածկման և ողողման ենթակա տարածքները, որը ներառում է «Սևան» ազգային պարկի լճի ջրային սահմանից մինչև 1905,0 մետր բացարձակ նիշը: Ներկայացված գծագրական նյութը ևս անընթեռնելի է և հնարավոր չէ հասկանալ, թե որ նիշերում են տեղակայված լինելու ժամանակավոր շինությունները:

Հայտն ուղարկվել է կարծիքի նաև «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ին, որի կողմից ևս Հայտի լրամշակված տարբերակի վերաբերյալ ներկայացվել են մի շարք դիտողություններ՝ կապված մաքրման կայանի տեղադրման, ինչպես նաև կանաչապատման մակերեսին ներկայացվող պահանջների հետ (ՀՀ կառավարության 2011 թվականի 177-Ն որոշման պահանջին համապատասխան):

Փորձաքննական գործընթացում Հայտը երկրորդ անգամ է ուղարկվել ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովին, ինչին ի պատասխան նշվել է, որ իրենց կողմից ներկայացված պահանջները հիմնականում չեն կատարվել:

Փորձաքննության գործընթացքում Հայտն երկու անգամ ուղարկվել է լրամշակման, սակայն այն լրամշակվել է թերի:

Վերը նշված հիմավորումները հիմք են տալիս եզրահանգելու, որ Հայտում չեն նախատեսվել բավարար միջոցառումներ, որոնք նախատեսվող գործունեության ընթացքում կապահովեն Սևանա լճի պահպանությանն ուղղված օրենսդրական պահանջների կատարումը, ինչի պարագայում գործունեության իրականացումը կարող է առաջացնել բնապահպանական ռիսկեր Սևանա լճի էկոհամակարգի համար (Սևանա լճում կեղտաջրերի ավելացման հետևանքով ֆոսֆատների, նիտրատների, մակերևութային ակտիվ նյութերի քանակի ավելացում, ջրի ծաղկում, կենսաբազմազանության բնականոն գործունեության խաթարում և այլն):

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները՝ «ԺԱՍՄԻՆԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոցի 70 հասցեում նոր տեղադրվող ոչ հիմնական փայտյա տաղավարների և տնակների տեղակապման աշխատանքների նախնական գնահատման հայտին տրվում է բացասական փորձաքննական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Քրիստինե Հարությունյան